449-451 ԹԹ. ՀԱՅ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

(ուսումնամեթոդական ուղեցույց և դիդակտիկ նյութեր հանրակրթական դպրոցների պատմության ուսուցիչների համար)

Ա. Մ. Այվազյան
պատ. գիտ. թեկ, քաղ. գիտ. դոկ.
(Մաշտոցյան Մատենադարանի ավագ գիտաշխատող)

Առհասարակ, ի՞նչ պետք է դասավանդվի 449-451 թթ. հայ-պարսկական («Վարդանանց») պատերազմի և Ավարայրի ճակատամարտի մասին «Հայոց պատմության» դպրոցական դասագրքում: Ինչպիսի՞ խնդիրներն ու պատմական փաստերը պետք է արժանանան առաջնային ուշադրության: Ի՞նչ ծավալ պետք է նախատեսել թեման աշակերտների կողմից պատշաճորեն յուրացնելու համար: Ինչպե՞ս է այդ պատերազմը ներկայացված «Հայոց պատմության» 7-րդ դասարանի նոր դասագրքում (2023 թ., հեղինակ՝ Սմբատ Հովհաննիսյան): Այս հարցերին է պատասխանում ներկա ուղեցույցը՝ կենտրոնանալով հիմնականում պատերազմի ռազմական պատմության վրա:

Ոչ մի թեմա, թերևս, այնքան պարզորեն չի բացահայտում «Հայոց պատմության» 7-րդ դասարանի նոր դասագրքում տեղ գտած մեծաթիվ աղճատումների հակապատմագիկան միտումնավորությունը, որքան Վարդանանց պատերազմը: Ստորև համառոտաբար կշոշափվեն միայն առավել աղաղակող խնդիրները: Պետք է նաև նկատել, որ այս թեման որոշ առումներով թերի է ներկայացված նաև հին դասագրքում (խմբագիրներ՝ Բ. Հարությունյան և Պ. Հովհաննիսյան, թեմայի հեղինակ՝ Հ. Մարգարյան), որում նույնպես նկատի չեն առնված պատմագիտության նորագույն ձեռքբերումները: Այդ մասին ևս խոսք կլինի:

Նախ, Վարդանանց պատերազմն ամենից առաջ հե՛նց պատերազմ էր, այսինքն՝ հակառակորդ բանակների իրարահաջորդ բախումների, ճակատամարտերի, զորահավաքների, ամրոցների հաջող և ապարդյուն պաշարումների, մարտարշավների և այլօրինակ ռազմական գործողությունների ժամանակագրական շարք ու ավարտուն ամբողջություն: Այնինչ 2023 թ. դասագրքում հայ-պարսկական այդ մեծ պատերազմի ռազմական պատմությունը դուրս է շպրտված, այն պարզապես բացակայում է: Դա էլ հենց թույլ է տալիս հեղինակին կատարել սխալ, կամայական և միտումնավոր եզրակացություններ, խոշոր հաշվով՝ կեղծել պատմությունը: Նշված չէ անգամ պատերազմի երկամյա տևողությունը՝ 449-451 թթ. (ավելի ստույգ՝ 449 թ. վերջերից մինչև 451 թ. վերջերը): Դասագրքում ռազմական ու մարտական բազմաթիվ ու տարատեսակ գործողություններն արժանացել են միայն հետևյալ թռուցիկ հիշատակման (թյուր բնութագրությամբ հանդերձ).

> «451 թ. մայիսի 26-ին Տղմուտ գետի ափին՝ Ավարայրի դաշտում, տեղի է ունենում վճռական ճակատամարտը: Հայերը, չնայած իրենց հերոսական և անձնուրաց դիմադրությանը, պարտություն են կրում: Զոհվում է սպարապետ Վարդան Մամիկոնյանը: Չնայած դրան՝ ապստամբությունը չի մարում՝ ստանալով պարտիզանական բնույթ» (էջ 130-131):

Եվ վերջ: Թե վերոբերյալ գնահատականները որքանով են կեղծ ու սխալ, ցույց կտրվի քիչ հետո (այս փոքրիկ հատվածում առկա է նաև ոճական անխնամություն՝ երկու անգամ կիրառվում է «չնայած» շաղկապը, այնինչ երկրորդ անգամ հարկ էր գործածել «թեպետև»-ը): Բայց նախևառաջ աչք է ծակում հայոց այդ մեծ ազատագրական պատերազմի փաստերի միտումնավոր անտեսումը: Կարելի՞ է արդյոք պատկերացնել, որ, օրինակ, ռուսները Բորոդինոյի կամ Պոլտավայի ճակատամարտերն իրենց դպրոցական դասագրքերում ընդամենը երկու-երեք նախադասությամբ ներկայացնեն: Մի՞թե ֆրանսիացիները Վաթեռլոյի կամ Վերդենի ճակատամարտերի մասին դպրոցական դասագրքերում երկու-երեք նախադասություն են գրում: Կամ մի՞թե ռուսական կամ ֆրանսիական դասագրքերում այդ գլխավոր ճակատամարտերը ներկայացվում են առանձին վերցված՝ առանց նկարագրելու և բնութագրելու համապատասխան պատերազմներում տեղի ունեցած մյուս կարևոր ռազմական զարգացումները:

Դասագրքում պետք է ընդգծել, որ Ավարայրի ճակատամարտը 5-9-րդ դարերում Հայկական բանակի մղած ամենամեծ ճակատամարտն է: Ավելին, Ավարայրի ճակատամարտը նաև 4-6-րդ դարերում (ուշ անտիկ և վաղ միջնադարյան շրջանում) Առաջավոր Ասիայում և Եվրոպայում մղված խոշորագույն ճակատամարտերից մեկն է: Այս առումով այն ոչ միայն հայոց, այլև համաշխարհային ռազմական պատմության կարևոր իրադարձություններից է:

«Հայոց պատմության» դպրոցական և բուհական դասագրքերում պետք է, ըստ ժամանակագրական հերթականության, հնարավորինս սեղմ կերպով հիշատակվեն ու մեկնաբանվեն հետևյալ ռազմական իրադարձությունները (առաջին բաժնում մի քանի դրվագ ներկայացվում է համառոտ, երկրորդ՝ դիդակտիկ նյութերի բաժնում՝ փոքր-ինչ ավելի ընդարձակորեն):

449-451 թթ. հայ-պարսկական պատերազմի ժամանակագրությունն ու գլխավոր իրադարձությունները

449 Թ. ՆՈՅԵՄԲԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ

- Սասանյան արքունիքի որդեգրած ռազմաքաղաքական, հարկային և կրոնական բիրտ ճնշումների քաղաքականությունը սպառնում էր կործանել Մարզպանական Հայաստանի ներքաղաքական, եկեղեցական-կրոնական և դատական անկախությունը, ավելին՝ ոչնչացնել հայ ժողովրդի ավանդական կենսակերպը, օրենքներն ու սովորույթները: Զուր չէ, որ Ավարայրի ճակատամարտից առաջ Վարդան Մամիկոնյանը հիշեցնում էր իր զորքին, որ պատերազմը միայն հավատքի համար չէ, այլ նաև «հայրենի աստվածատուր օրենքների»:
- Վարդան Մամիկոնյանի ծրագրած ու ղեկավարած գիշերային ռազմագործողության արդյունքում իր իսկ դաշտային ճամբարում ջախջախվում է Հայաստան մտած սասանյան հեծյալ զորամիավորումը (մոտ 10,000 ռազմիկ):
- Զուգահեռաբար 16 կայծակնային ռազմագործողությունների արդյունքում ոչնչացվում են Մարզպանական Հայաստանի 16 առանցքային ամրոցներում (ներառյալ մարյաքաղաք Արտաշատում) տեղակայված սասանյան կայազորները:

- Արցախում տեղակայված հայոց այրուձին խոր մարտարշավ (ռեյդ) է կատարում Փայտակարանի միջով դեպի Ատրպատական՝ կանխարգելիչ հարված հասցնելով պարսից սահմանամերձ շրջաններին և զորքերին:

450 Թ. ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ

- Մարզպանական Հայաստանում անցկացվում է համընդհանուր զորահավաք, որի արդյունքում Հայկական բանակի թվակազմը կտրուկ աճում է և հասցվում մոտ 90 հազարի:
- Բանակը բաժանվում է երեք հիմնական մասի՝ 1-ին, 2-րդ և 3-րդ զորաբանակների («գնդերի»): 1-ին զորաբանակի հրամանատար է նշանակվում Ներշապուհ Արծրունին, 2-րդինը՝ սպարապետ Վարդան Մամիկոնյանը, 3-րդինը՝ Վասակ Սյունին:
- Հայոց 2-րդ զորաբանակն արշավում է դեպի Աղվանք ու Ճորա պահակ (ներկայիս Դերբենդի շրջակայք), ճանապարհին՝ Խաղխաղի ճակատամարտում ջախջախիչ պարտության մատնելով պարսից բանակին: Մինչ այդ Վասակ Սյունին պարսից հրամանատարությանը մատնել էր Վարդան Մամիկոնյանի գլխավորած 2-րդ զորաբանակի երթուղին և ժամանակացույցը:
- 2-րդ զորաբանակը մի շարք հաղթական մարտեր մղելուց հետո ազատագրում է Աղվանքը և գրավում Ճորա պահակի ամրոցը:
- Ճորա պահակից Վարդան Մամիկոնյանը կապ է հաստատում և բանակցություններ վարում հոների հզոր դաշնության հետ, որի արդյունքում կնքվում է ռազմական փոխօգնության մասին հայ-հոնական պայմանագիր ու դաշինք:

450 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ

- Վասակ Սյունին դավաճանաբար խախտում է Հայոց բանակի ռազմական գործողությունների (իր իսկ մասնակցությամբ ու համաձայնությամբ) հաստատված պլանը և բացահայտ անցնում Սասանյանների կողմը, ինչի հետևանքով Վասակ Սյունու գլխավորած 3-րդ հայկական զորաբանակից հեռանում են Հայաստանի ազատագրության գաղափարին նվիրված մի շարք նախարարներ և հրամանատարներ:
- Այդուամենայնիվ, Վասակ Սյունին 3-րդ զորաբանակի իր ենթակայության տակ մնացած զորքով Սյունիքից և Արցախից շարժվում է դեպի Այրարատ և գրավում Հայաստանի այդ կենտրոնական նահանգն ու մայրաքաղաք Արտաշատը:
- Հայաստանի ազատագրության ուխտին և սպարապետ Վարդան Մամիկոնյանին հավատարիմ մնացած այրարատյան կայազորային զորքերը նահանջում են դեպի Մարզպանական Հայաստանի այլ նահանգներ:
- Վասակ Սյունին հրամայում է իր զորքին կողոպտել ու ոչնչացնել Այրարատում եղած հայկական զորքերի ամառային և ձմեռային կայաններն ու ճամբարները:
- Տեղեկանալով Վասակ Սյունու դավաճանության մասին՝ Վարդան Մամիկոնյանի գլխավորած 2-րդ հայկական զորաբանակը Ճորա պահակից շտապ վերադառնում է Հայաստան: Այդ մասին լուր ստանալուց հետո Վասակ Սյունին և նրա զորքը հապճեպ լքում են մայրաքաղաք Արտաշատն ու Այրարատ նահանգից հեռանում Սյունիք:

- Վարդան Մամիկոնյանի 2-րդ և Ներշապուհ Արծրունու 1-ին հայկական զորաբանակները շրջափակում են Վասակ Սյունու խռովարար զորքը Սյունիքում, մի շարք բերդեր գրավում՝ մատնելով վասակյաններին լիակատար պարտության և վերահսկողություն հաստատելով ամբողջ Սյունիքի վրա:
- Վասակ Սյունին փախչում է Փայտակարան և միանում այնտեղ Հայաստան ներխուժելուն պատրաստվող պարսկական բանակին: Նա զբաղեցնում է բարձր պաշտոն պարսից բանակի շտաբում՝ դառնալով պարսից գլխավոր հրամանատարության համար բանիմաց և անփոխարինելի խորհրդատու Հայաստանը, Վիրքը և Աղվանքը վերազավթելու գործում:
- 450 թ. դեկտեմբերին Մարզպանական (իսկ այդ պահին արդեն «Վարդանյան») Հայաստանում տոնում են վասակյան խռովարար ուժերի նկատմամբ լիակատար հաղթանակը և ամբողջ երկրում Հայկական բանակի վերահսկողություն հաստատելը:
- Սպարապետ Վարդան Մամիկոնյանը նախարարների, Հայոց եկեղեցու և ամբողջ ժողովրդի կողմից ընդունվում է որպես երկրի անառարկելի առաջնորդ և, փաստորեն, միանձնյա ղեկավար:

450 Թ. ՆՈՅԵՄԲԵՐ-ՄԱՐՏ

- Միհր-Ներսեհի գլխավորությամբ Փայտակարանում կենտրոնացվում ու կազմավորվում է դեպի Հայաստան արշավանքին նախապատրաստվող սասանյան մեծ զավթիչ բանակը:
- Վասակ Սյունու ղեկավարությամբ ու անմիջական մասնակցությամբ կաշառվում ու պարսիկների կողմն են անցնում Վիրքի, Աղվանքի, հյուսիսային Կովկասի ֆեոդալները, ինչպես նաև մի քանի հայ նախարարներ:
- Վասակ Սյունու անմիջական մասնակցությամբ պարսկական բանակը վերազավթում է Աղվանքն ու Ճորա պահակը:
- Ընթանում են բուռն նախապատրաստություններ Հայաստան ներխուժելու համար:
- 450 թ. աշնանն Այրարատի նահանգում Վասակ Սյունու կողմից ձմեռային պաշարների ոչնչացումից հետո Վարդան Մամիկոնյանը ստիպված է լինում հայկական զորքերը տարրակենտրոնացնել և ուղարկել երկրի տարբեր գավառների ձմեռանոցներն ու զորանոցները՝ պատվիրելով նրանց եռանդունորեն պատրաստվել առաջիկա մարտերին:
- Միաժամանակ, Ներշապուհ Արծրունու 1-ին զորաբանակի կազմից առանձնացվում է 10-15000 հոգուց բաղկացած մի առանձին «սահմանապահ զորամիավորում» (Վահան Արծրունու հրամանատարությամբ) և թողնվում Հեր-և-Զարևանդի գավառներում՝ սահմանը հսկելու նպատակով, այսինքն՝ իրականացնելու համար նույն խնդիրը, որը 450 թ. գարնանն ու ամռանը դրված էր այդտեղ կանգնած ամբողջ 1-ին զորաբանակի առջև:

- Պարսկական բանակը շարժվում է Փայտակարանից և մեկուկես-երկու ամիս հետո Թավրիզի կողմից մոտենում է Մարզպանական Հայաստանի սահմաններին:
- Վարդան Մամիկոնյանը հայկական զորքերը ձմեռանոցներից շտապ հետ է կանչում Արտաշատ:
- Սասանյան բանակը ներխուժում է Հայաստան՝ Հեր-և-Զարևանդ գավառներ:
- Հայկական առանձին սահմանապահ զորամիավորումը հետ է քաշվում և ամրանում Ավարայրի (այժմ՝ Կարագիադինի) դաշտում՝ Տղմուտ (այժմ՝ Ակ-չայ) գետի հյուսիսային ափին՝ նախապես պատրաստված պաշտպանական դիրքերում: Ներկայումս այդ դաշտը գտնվում է Իրանում՝ Ուրմիա լճի ափից մոտավորապես 70 կմ հյուսիս և Վանա լճի հյուսիսարևելյան եզրից մոտավորապես 120 կմ արևելք (ահա այդ դաշտի երկրաչափական մոտավոր կենտրոնի կոորդինատները՝ N 38°52′12.67″ E 45°03′47.41″):
- Հայկական բանակի հիմնական ուժերը, Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ, Արտաշատից շարժվում են դեպի Ավարայրի դաշտ և այնտեղ դաշտային ճամբար խփում: Այդտեղ էլ տեղի է ունենում հայկական զորքերի վերջնական միավորումը:
- Սասանյան բանակը ևս հասնում է Ավարայրի դաշտ և այնտեղ կառուցում իր դաշտային ճամբարը՝ Տղմուտի հարավային ափին:
- 451 թ. ապրիլի կեսերից մինչև մայիսի 26-ը հայկական և պարսկական բանակները կանգնած են մնում միմյանց դիմաց՝ առանց խոշոր ռազմական գործողություններ ձեռնարկելու: Այդ ընթացքում տեղի ունեցած ամենալուրջ բախումը սեպուհ Առանձար Ամատունու 2000-անոց հեծյալ գնդի հարձակումն էր մոտակա գավառներում պարեն հայթայթող պարսկական խոշոր զորագնդի վրա, որը պսակվում է հայերի կատարյալ հաղթանակով:

ԱՎԱՐԱՅՐԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ (26 մայիսի 451 թ.)

Մայիսի 26-ին տեղի է ունենում Ավարայրի ճակատամարտը, որի ընթացքն ու փուլերը դասագրքում պարտադիր պետք է սեղմ կերպով ներկայացվեն (տե՛ս ստորև): Հայկական բանակի թվակազմում կար 66,000 մարտիկ, պարսկական բանակում՝ մոտավորապես երկու անգամ ավելի:

Ճակատամարտն ավարտվել է ոչ թե որևէ կողմի հաղթանակով, այլ մարտավարական ոչ-ոքիով: Ընդ որում, սասանյան բանակի կորուստները եռակի ավելի են եղել՝ 3544 սպանված ընդդեմ 1036 սպանված հայերի: Ճակատամարտում, սակայն, զոհվել է հայոց սպարապետ Վարդան Մամիկոնյանը, ով իր կյանքի օրոք արդեն դարձել էր լեգենդար առաջնորդ:

Դասագրքում անպայման պետք է զետեղվի քարտեզ՝ ցույց տալու համար Ավարայրի ճակատամարտի ընթացքը, հակառակորդ կողմերի մարտակարգերն ու զորաշարժերը: Վարդան Մամիկոնյանի ու նրա զինակից նախարար-զորավարների նպատակը հետևյալն էր. ուժեղ գրոհով կոտրել պարսկական բանակի թևերից մեկը, շպրտել այն

կենտրոնի ու մյուս թևի վրա, այդպիսով խախտել պարսիկների ամբողջ մարտական դասավորությունը և ջախջախել նրանց: Սա «մաքսիմում ծրագիրն» էր: Բայց եթե այն չհաջողվեր, ապա գործի էր դրվելու պահեստային՝ «մինիմում ծրագիրը»՝ նահանջել Հայաստանի խորքերը և շարունակել կազմակերպված դիմադրությունը:

Հայոց բանակի պաշտպանական ռազմավարությունը

Այս երկրորդ ծրագիրը բարդ ռազմավարություն էր, սակայն հայերը հաճախ են կարողացել կիրառել այն օտար ներխուժումների ժամանակ, հատկապես 4-րդ դարի ընթացքում՝ Սասանյանների դեմ բազմաթիվ, տևական պատերազմներում: Այդպիսի ռազմավարություն կիրառել են, օրինակ, ռուսները Նապոլեոնի ներխուժման ժամանակ: Նույն ռազմավարությունը կիրառվել է գերմանացիների դեմ Հայրենական Մեծ պատերազմի ժամանակ. նահանջ երկրի խորքը, հակահարձակումներ ու զավթչի դուրս մղում:

Միաժամանակ այս ռազմավարությունը հղի էր վտանգներով, քանի որ թշնամու զորքը երկրի ներսում ավերում ու կողոպտում էր գյուղերն ու քաղաքները, ժողովրդին ոչնչացնում ու զանգվածաբար բռնագաղթեցնում, ինչպես, օրինակ, 360-ական թթ. Շապուհ Երկրորդի բանակը Հայաստանից ավելի քան մեկ միլիոն մարդու բռնագաղթի ենթարկեց: Ուստի այդ ռազմավարությանը դիմում էին որպես վերջին տարբերակ: Եվ երբ հնարավոր չէր լինում զավթիչներին կանգնեցել երկրի սահմանների մոտ, հայերը նահանջում էին՝ պահպանելով իրենց բանակը (հատկապես՝ հեծելազորը) մարտական բարձր պատրաստականության վիճակում: Այնուհետև թշնամուն ուժասպառ էին անում Հայաստանի ամրոցների պաշարումների և հյուծիչ մանր բախումների միջոցով, իսկ հայկական տարաշարժուն (մոբիլ) ուժերն անընդհատ սպառնում ու կտրատում էին պարսիկների հաղորդակցման ուղիները: Դրանից հետո թշնամին ստիպված էր լինում նահանջել: Եվ հենց այդ պահին, երբեմն էլ՝ երբ պարսից բանակը պատսպարված էր իր դաշտային ճամբարում, հայոց հեծելազորն անսպասելիորեն անցնում էր վճռական հակահարձակման, որն էլ շատ հաճախ ավարտվում էր պարսկական բանակի ջախջախմամբ և երկրի սահմաններից դուրս վտարմամբ: Այդպես է եղել շատ անգամ: Օրինակ՝ 460-ական թթ. Աղձքի մոտ տեղի ունեցած հայտնի ճակատամարտում սպարապետ Վասակ Մամիկոնյանի գլխավորած Հայոց բանակը հանկարծակի հարձակվել և պարտության է մատնել սասանյան բանակին, երբ վերջինս մեծ ավարով նահանջում էր Պարսկաստան: Հազարավոր գերիներն ազատվել են, թալանված հարստությունները հետ են խլվել, այդ թվում՝ Դարանաղյաց Անիից պարսիկների պեղած հայոց արքաների մասունքները, որոնք վերաթաղվել են Աղձքում:

Ավարայրի ճակատամարտի ընթացքն ու փուլերը

Ինչպես նշվեց, Ավարայրում հայոց հրամանատարության «մինիմում ծրագիրը» երկրի խորք նահանջելն էր, եթե չհաջողվեր ջախջախել պարսկական բանակը գլխավոր ճակատամարտում: Ճակատամարտի սկզբում հայկական ձախ թևը և քիչ հետո նրան միացած Վարդան Մամիկոնյանի ընտիր պահեստային զորախումբը (հրամանատար՝ Խորեն Խորխոռունի), մարտանցելով Տղմուտ գետը, հարվածում են պարսկական բանակի աջ թևին: Ջախջախելով աջ թևի առաջին գծում կանգնած հեծելազորը, հայոց ձախ

թևը հարձակվում է երկրորդ գծի՝ ծանր հետևակազորի վրա, որի առջևում կանգնած էին մի քանի փղեր: Այդ մարտական կենդանիները կատարում էին հրամանատարական կետերի դեր՝ նրանց վրա նստած էին հետևակային գնդերի հրամանատարները: Բացի այդ մի քանի փղերից, պարսիկներն ունեին փղազորից բաղկացած պահեստային մի մեծ զորախումբ՝ Արտաշիր զորավարի գլխավորությամբ: Մոտավոր հաշվարկներով, պարսկական բանակում եղել է, ընդհանուր առմամբ, մոտ 40 փիղ, որոնցից 15-16-ը նրանց երկրորդ գծի առջևում, իսկ մյուսները՝ թիկունքում կանգնած պահեստային զորախմբում: Վարդան Մամիկոնյանի գլխավորած կատաղի գրոհի ժամանակ ոչնչացվել են ինչպես պարսից աջ թևում կանգնած 5-6 փղերը (կամ առնվազն դրանցից մի քանիսը), այնպես էլ նրանց վրա գտնվող պարսկական գնդերի հրամանատարները:

Ավարայրի ճակատամարտը կարող էր հաղթական ելք ունենալ, եթե պարսից բանակի գլխավոր հրամանատար Մուշկան Նիսալավուրտն ուժասպառ եղող պարսից աջ թևին վերջին պահին օգնության չհասցներ իր զորքի կենտրոնի ուժերը՝ նրանց մասնակի նահանջն իրականացնելու միջոցով: Եթե այդ զորաշարժը չլիներ, հայերը ջախջախիչ հաղթանակ կտանեին, ինչպես եղել էր դրանից մեկ տարի առաջ՝ Խաղխաղի ճակատամարտում՝ նույն մարտավարական հնարքը կիրառելու շնորհիվ:

Շատ արագ հասկանալով, որ այս անգամ իր մտահղացումը չտվեց ակնկալվող արդյունքը, ու հաշվի առնելով այն, որ պարսկական բանակը մոտ երկու անգամ ավելի մեծ էր և ուներ չօգտագործված ռեզերվներ, ինչպես նաև այն, որ այդ բանակը գլխավորում էր հմուտ ու փորձառու մի զորավար՝ Մուշկան Նիսալավուրտը, Վարդան Մամիկոնյանն ընդունեց միակ ճիշտ որոշումը՝ հրամայեց հայոց զորքերին դիմել ընդհանուր, կազմակերպված նահանջի՝ այդպիսով ուժի մեջ դնելով հայոց շտաբում նախապես մշակված վերոհիշյալ «մինիմում ծրագիրը»: Այդ նահանջն ապահովելու նպատակով հայոց սպարապետը իր զորագնդի վրա բևեռեց պարսից աջ թևի, կենտրոնի ու պահեստային զորախմբերի ամբողջ ուշադրությունը և մնաց ճակատամարտի գլխավոր օջախում՝ հայոց ձախ թևում, որտեղ և ընկավ քաջի մահով: Օգտվելով Վարդան Մամիկոնյանի շահած ժամանակից՝ հայկական բանակի գլխավոր ուժերն ապահով նահանջեցին դեպի երկրի խորքը՝ տալով երեք անգամ պակաս զոհ, քան պարսիկները: Այդ նահանջը կրել է խիստ կանոնավոր բնույթ, այլապես հայոց զոհերը տասնապատիկ ու քսանապատիկ կլինեին: Ընդհանրապես, մարտի ընթացքում նահանջը բարդագույն մանևր է, այն վատ կազմակերպելու դեպքում հետևանքները կործանարար են լինում: Հայոց բանակը փայլուն իրականացրեց նահանջի զորաշարժը:

Ավարայրի ճակատամարտի ելքն ու արդյունքները

Օտար կեղծարարները և նրանց միացած 2023 թ. դասագիրքը պնդում են, թե Ավարայրի ճակատամարտում հայերն իբր պարտություն են կրել: Սա պատմական փաստերին, աղբյուրներին, հայ պատմագիտության ձեռքբերումներին ու ռազմական գիտությանը հակասող անհիմն տեսակետ է: Ռազմական տեսության գերմանացի անզուգական դասականի՝ Կարլ ֆոն Կլաուզեվիցի սահմանումով, հաղթանակի համապարփակ հասկացությունը ներառում է երեք հիմնական տարր.

1) հակառակորդի ֆիզիկական ուժերի մեծ կորուստները,

2) նրա բարոյական ուժերի նույնպիսի կորուստները,

3) այդ մասին պարտվածի բացահայտ խոստովանությունը, որով նա հրաժարվում է պատերազմում իր ունեցած նախնական գլխավոր մտադրությունից:

Ավարայրում այս երեք նպատակներից և ոչ մեկին պարսիկները չհասան: Ընդհակառակը՝ ճակատամարտում նրանք հայերից երեք անգամ ավել սպանված տվեցին (այդ թվում՝ ինը բարձրաստիճան զորահրամանատար) ընդդեմ 1036 հոգու: Փոխարենը՝ իհարկե, ռազմի դաշտում զոհվեց հայոց գլխավոր հրամանատարը, ինչպես նաև 10 հայ բարձրաստիճան զորահրամանատար: Բայց ամենակարևորն այն էր, որ Մուշկան Նիսալավուրտը չկարողացավ ջախջախել Հայոց բանակը, որն, ինչպես քիչ անց կնշվի, բաժանվելով չորս մասի, խույս տվեց հետապնդումից և արդեն երկրի խորքում անցավ զինված դիմադրության հաջորդ փուլին: Պատերազմը շարունակվեց ևս կես տարի՝ ավարտվելով ոչ միայն Մարզպանական Հայաստանի ինքնավարությունը վերացնելու և հայերին ձուլելու *իր նախնական մտադրություններից Սասանյան արքունիքի հրաժարումով*, այլև հայերին արված ևս մեկ չափազանց նշանակալից մի զիջումով, որը մեր պատմագիտության մեջ իսպառ աչքաթող է արվել:

Բանն այն է, որ 449 թվականին, երբ սկսվեց հայոց ապստամբությունը, Մարզպանական Հայաստանի 16 կարևոր ամրոցներում տեղակայված էին պարսկական կայազորներ, որոնք Վարդան Մամիկոնյանն ու իր զինակիցները հատ-հատ ոչնչացրեցին հենց ամենասկզբում: Իսկ ահա 482 թվականին, երբ սկսվեց Սասանյանների դեմ հաջորդ ապստամբությունը՝ Վարդան Մամիկոնյանի զարմիկ Վահան Մամիկոնյանի գլխավորությամբ, Մարզպանական Հայաստանում գեթ մեկ պարսկական կայազոր գոյություն չուներ: Սա նշանակում է, որ 451 թվականի վերջին Վարդանանց ուխտին հավատարիմ մնացած հայ նախարարները՝ ինքնակամ ներկայանալով ու հանձնվելով պարսից իշխանությանը, դիմել էին այդ քայլին միայն այն բանից հետո, երբ ամուր երաշխիքներ էին ստացել առ այն, որ հայոց հողի վրա պարսկական զորքեր չեն տեղակայվելու: Այսպիսով, Ավարայրում և առհասարակ 449-451 թթ. հայ-պարսկական պատերազում հայոց պարտության մասին դատողությունները սխալ են ու հակագիտական:

Թեև Ավարայրի ճակատամարտն ավարտվել է մարտավարական ոչ ոքիով, ժամանակի ընթացքում այն վերածվել է հայոց ռազմավարական հաղթանակի հատկապես քաղաքական և բարոյագաղափարական առումներով: Առանց Ավարայրի անհնար կլինեին 482-484 թթ. հայ-պարսկական պատերազմում Վահանանց ձեռքբերած հաղթանակներն ու Նվարսակի դաշնագիրը, որը Մարզպանական Հայաստանին շնորհեց չափազանց լայն ինքնավարություն ռազմական, իրավաքաղաքական և կրոնական-մշակութային ոլորտներում:

Մարզպանական Հայաստանի չափահաս արական բնակչության մոտ մեկ տասներորդը (և հայ ժողովրդի չափահաս տղամարդկանց մոտ 6-7 տոկոսը) մասնակցել է Ավարայրի ճակատամարտին, որն ինքնին արդեն ազատագրական գաղափարի ուժգին քարոզչություն էր: Դժվար չէ պատկերացնել, թե Վարդան Մամիկոնյանի և նրա ընկերների հերոսական կռիվներն ու նահատակությունը և, մյուս կողմից, Վասակ Սյունիի դավաճանությունն ինչպիսի զանգվածային արձագանք են ստացել բոլոր հայերի մեջ՝ անկախ հասարակության տարբեր խավերին ու սոցիալական շերտերին նրանց պատկանելությունից:

Վասակ Սյունին և Ավարայրը

Վասակ Սյունին Ավարայրի ճակատամարտում կռվել է պարսկական բանակի կազմում որպես բարձրաստիճան հրամանատար՝ անձամբ մասնակցելով նաև Վարդան Մամիկոնյանի ջոկատի շրջափակմանն ու ոչնչացմանը:

2023 թ. «Հայոց պատմության» դասագրքում Վասակ Սյունին ներկայացվում է որպես դրական մի կերպար, ով ընդամենը «հույս ուներ Պարսկաստանի հետ բանակցությունների միջոցով հասնել փոխզիջման»: Իսկ թե պատերազմի ժաանակ ինչպիսի կործանարար պառակտչական ու դավաճանական գործունեություն է նա ծավալել, այդ մասին՝ ո՛չ մի խոսք, քար լռություն: Աշակերտներին, փաստորեն, մատուցվում է կեղծ տեղեկատվություն: Ասված է միայն, թե պատերազմից հետո «Վասակ Սյունին զրկվում է մարզպանի պաշտոնից, ձերբակալվում է և մահանում բանտում»: Ընդհանուր համատեքստից կարելի է նույնիսկ այն տպավորությունը ստանալ, թե Վասակ Սյունին հանուն հայրենիքի նահատակված մի մարդ էր:

Պետք է ավելացնել նաև, որ բացի մեծ խռովություն հրահրելուց և կարճատև եղբայրասպան պատերազմ պատճառելուց, ինչպես նաև պարսկական բանակի կազմում պատերազմին անմիջականորեն մասնակցելուց, Վասակ Սյունին և նրա փոքրաթիվ աջակիցները զբաղվել են նաև մատնչությամբ: Հայոց դիմադրությանը մեծ վնաս է հասցրել Վասակ Սյունու և վասակյանների կողմից արժեքավոր հետախուզական տեղեկությունների հավաքագրումն ու պարսիկներին դավաճանաբար փոխանցումը, մասնավորապես Հայկական բանակի թվաքանակի, կազմակերպչական կառուցվածքի, հրամանատարության համակարգի, մարտավարական նախապատրաստությունների, հրամանատարական ու մարտական պատրաստվածության, զորքերի բարոյահոգեբանական վիճակի ու հոգեբանական կայունության վերաբերյալ: Ահա թե Սասանյան տերության երկրորդ դեմքի՝ հազարապետ Միհր-Ներսեհին ինչպիսի հարցերն են հուզել, որոնց էլ Վասակ Սյունին տվել է հանգամանալից պատասխաններ.

> «[Միգր-Ներսեհը] հարցնում և ճշտում էր, թե Հայոց երկրում Վարդանի բանակում այրերի ընդհանուր թիվը քանիսն է: Իրազեկվելով նրանից, որ նրանք վաթսուն հազարից ավելի են, նա նաև տեղեկություն է պահանջել յուրաքանչյուրի քաջության մասին, լավ զինված ռազմիկների թվաքանակի, պաշտպանական զենք չունեցող նետաձիգների, ինչպես նաև վահանավոր (=ծանր զինված) հետևակայինների մասին: Իսկ երբ ճշտեց [Հայկական] բանակի թվակազմն ու կառուցվածքը, ավելի մեծ եռանդով սկսեց հարցաքննել. թե՝ քանի՞ զորահրամանատար ունեն քաջ ասպետները, որպեսզի յուրաքանչյուրի դեմ պատրաստի երեքին... Եվ նույնիսկ յուրաքանչյուր հազարյակի մասին էր հարցաքննում նրան (Վասակ Սյունուն): Ու նաև թե՝ քանի՞ գնդի է բաժանվելու բանակը և ովքե՞ր են լինելու գնդերի հրամանատարները: Ու թե՝ ո՞ր թևից է մարտի մեջ մտնելու այս կամ այն զորավարը: Ու թե՝ ի՞նչ են համիարզներից (=հրամանատարի տեղակալներից) յուրաքանչյուրի անունները: Ու թե՝ յուրաքանչյուր գնդում քանի՞ շեփորահար է լինելու: Լաքի՞շ (=ամրացված դաշտային ճամբար) են հիմնելու, թե՞ բաց դաշտում են ճամբարելու: Արդյո՞ք նրանք համաչափ են գրոհելու ամբողջ ճակատով, թե՞ ուժերը կկենտրոնացնեն մեկ կետի վրա: Նրանցից ո՞վ կունենա կասկածներ և տատանումներ: Իսկ նրանցից ո՞վ է մարտնչելու՝ զոհաբերելով սեփական կյանքը»:

Ընդ որում, մեկուկես հազարամյակ անց էլ ակնհայտ է, որ այս ամենը շարադրող Եղիշե պատմիչը նշված հարցերի վերաբերյալ դրսևորում է ոչ միայն ռազմական, այլև հակահետախուզական գիտելիքներ ու պատրաստություն: Պարսկական շտաբում գտնվող Վասակի և վասակյանների դավաճանական (տվյալ դեպքում՝ մատնողական)

գործունեության մասին Եղիշեն ևս մեկ անգամ հիշատակում է հենց Ավարայրի ճակատամարտի օրը:

Ի դեպ, Վասակ Սյունու դավաճանական գործողությունները շրջանցվել են նաև 2010-ական թթ. մինչև 2022 թ. գործած դպրոցական դասագրքում (ավելի վաղ տարիների հրատարակությունները ձեռքիս տակ չունեմ): Այստեղ ևս նրա կերպարը ստացել է աղճատված ու մեղմացված գնահատականներ, օրինակ, ռազմական խռովությունն ու բացահայտ դավաճանությունը, որն ահռելի մեծ հարված հասցրեց հայոց միասնությանն ու բանակի հզորությանը, բնութագրվում են որպես «հատուկ քաղաքականություն» (էջ 39): Այդուամենայնիվ, հին դասագրքի հեղինակներն առնվազն ընդունում են, որ «Վասակը փաստորեն դրժեց համատեղ պայքարելու երդումը և հեռացավ ապստամբությունից» (էջ 39): Մինչդեռ նոր (2023 թ.) դասագրքում Վասակը պատկերված է ծուռ հայելում՝ որպես իրատես ու հայրենասեր մի գործիչ, այլ ոչ՝ իբրև պետական և ազգային դավաճան: Վասակ Սյունու վերը թվարկված գործողությունների պատճառով մեծապես խանգարվել է 449-451 թթ. Հայաստանի թագավորության վերականգնման փորձը:

451 Թ. ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ

- Ավարայրի դաշտից Հայոց բանակը դիմել է կազմակերպված նահանջի: Թողնելով բավարար չափով վերջապահ ուժեր՝ հայերը բաժանվել են չորս հիմնական զորախմբերի ու նահանջել չորս գլխավոր ուղղություններով՝ ամրանալով Հայաստանի կենտրոնում՝ Այրարատում, հարավ-արևմուտքում՝ Տմորիքում, հյուսիս-արևմուտքում՝ Տայքում և (Բյուզանդական կայսրության կազմում գտնվող) Խաղտիքում, ինչպես նաև արևելքում՝ Արցախում՝ այդպիսով ստեղծելով դիմադրության հզոր յուրօրինակ աղեղ: Կատաղի դիմադրությունը պարսիկներին շարունակվել է արդեն Հայաստանի խորքում:
- Ավարայրի ճակատամարտից մի քանի օր անց պարսիկները պաշարել են Այրարատի մատույցներում գտնվող հայկական անանուն մի բերդ, ամենայն հավանականությամբ՝ Մակուն: Այստեղ պաշտպանությունն իրականացրել են 913 զինվոր (որոնցից 700-ը նահանջել և բերդ էին մտել անմիջապես Ավարայրի դաշտից): Բերդի կայազորը լուրջ կորուստներ է պատճառում սասանյան բանակին՝ մի քանի շաբաթով հետաձգելով նրա առաջխաղացումը՝ դրանով իսկ թույլ տալով հայկական զորքերին ամրանալ երկրի խորքում գտնվող ամրոցներում և լեռնային անառիկ վայրերում: Պարսից գլխավոր հրամանատար Մուշկան Նիսալավուրտը առաջ է շարժվել միայն այն բանից հետո, երբ «արքայական հրամանով» իրեն են հասցվել թարմ համալրումները՝ «մեծաթիվ հեծելազոր», որով նա «համալրել է ընկածներին» և «զորքը դարձրել նախկինի չափ»:
- Կատաղի կռիվներ են տեղի ունեցել Վայոց Ձորում, որտեղ Արցախ նահանջող հայկական զորախմբի վերջապահ զորաջոկատները՝ տալով 300 զոհ, մեծ կորուստներ են պատճառում թշնամու ուժերին:
- Պարսիկները ամիսներ շարունակ պաշարել են Կապոյտ բերդը, բայց այն այդպես էլ չեն կարողացել գրավել: Մի շարք ուրիշ ամրոցներ ևս չեն հանձնվել ու շարունակել են դիմադրությունը: Վասակ Սյունին պարսկական զորքի կազմում մասնակցել է ռազմական գործողություններին, փորձել պառակտումներ մտցնել հայկական դիմադրության ճամբարում և դրդել հայերին անձնատվության:

- Հայոց բանակի հարավային և հյուսիսային գավառներում (Տմորիքում և Խաղտիք-Տայքում) կենտրոնացած զորախմբավորումները դիմում են փոխհամակարգված հակահարձակողական գործողությունների: Մասնավորապես, տմորիքյան զորախումբը խոր մարտարշավ է կատարել՝ ներխուժելով թշնամու սահմանային շրջաններ, ավերելով դրանք և բազմաթիվ գերիներ բերել-լցնելով Տմորիքի անառիկ ամրոցների մեջ: Իսկ Խաղտիքում և Տայքում եղած հայկական խմբավորումը պարտության է մատնել պարսկական խոշոր մի զորամիավորում՝ այդ նահանգից դուրս շպրտելով նրա մնացորդներին:
- Վերը նշված ռազմական գործողությունները, բնականաբար, չեն կարող բնութագրվել որպես «պարտիզանական», ինչպես անում է նոր (2023 թ.) դասագիրքը: Այդպիսի սահմանումն անհեթեթ է: Ժամանակակից ռազմական տեսական միտքը պարտիզաններին համարում է տեղի բնակիչներից բաղկացած դիմադրության անկանոն ուժեր, որոնք գործում են հակառակորդի կողմից գրավված տարածքում և, որպես կանոն, աջակցություն ունեն պետության և նրա բանակի կողմից: Պարտիզանները թաքնվում են խաղաղ բնակչության մեջ և խուսափում բաց բախումներից նույնիսկ թշնամու միջին չափի կանոնավոր կազմավորումների հետ: Նրանց մարտավարությունը հիմնականում ներառում է դարանակալումներ, դիվերսիաներ, հանկարծակի հարձակումներ և օկուպացիոն իշխանությունների առանցքային դեմքերի սպանություններ: Պարտիզաններն ընդունակ չեն հակահարձակողական գործողություններ իրականացնել հակառակորդի խոշոր կանոնավոր կազմավորումների դեմ, ներխուժել նրա սահմանամերձ շրջաններ, հրի ու սրի մատնել այնտեղ գտնվող ամրացված կետերը, բնակելի ֆոնդն ու տնտեսությունը, գերել մեծաթիվ կենդանի ուժ և տանել իրենց հենակետերը (այս դեպքում՝ Տմորիքի ամրոցները), որոնց գտնվելու վայրը ոչ մեկի համար գաղտնիք չէ: Նույնիսկ պատմությունից հայտնի ամենախոշոր պարտիզանական ուժերը, որպիսիք էին իսպանացի պարտիզանները, որոնք կռվել են Նապոլեոնի զորքերի դեմ, կամ Հայրենական մեծ պատերազմում սովետական պարտիզանական կազմավորումները, որոնք ստանում էին մեծ աջակցություն Կարմիր բանակից և պետությունից, չեն կարողացել և չէին կարող իրականացնել վերը նշված ծավալի ռազմական գործողություններ:
- Աշնանը վերջապես Սասանյան տերության դեմ պատերազմ են սկսում հոները՝ ըստ դեռևս Վարդան Մամիկոնյանի հետ կնքած հայ-հոնական փոխօգնության պայմանագրի: Նրանց զորքերը գրավում են Ճորա պահակի ամրոցը, ինչպես նաև ասպատակություններ ու ավերածություններ կատարում պարսկական մի շարք գավառներում:
- Այս ամենից հետո Սասանյանները ստիպված են լինում հրաժարվել Մարզպանական Հայաստանի ինքնավարության ոչնչացումից և հայ ժողովրդին ձուլելու քաղաքականությունից: Հայերը խոշոր զիջումներ են կորզում, մասնավորապես՝ Հայաստանից հանվում են պարսկական զորքերն ու կայազորները: Այդ զիջումների դիմաց՝ 35 ավագ և կրտսեր նախարարներ կամավորապես հանձնվում են Սասանյաններին և տարվում Պարսկաստանի խորքերը, որտեղից նրանց մի մասը տարիներ անց վերադառնում է Հայաստան:

449-451 թթ. հայ-պարսկական պատերազմը Հայրենական Մեծ պատերազմ էր հայերի համար, որին մասնակցել են ժողովրդի բոլոր խավերը՝ նախարարները, ազատները, շինականներն ու ռամիկները, ինչպես նաև հոգևորականությունը: Հաղթանակի դեպքում որոշված էր վերականգնել Մեծ Հայքի թագավորությունը:

Այս պատերազմը պետք է դպրոցում դասավանդվի ամենայն մանրամասնությամբ (եթե ոչ մեկ, ապա երկու-երեք դասերի ընթացքում), որովհետև այն ունի նաև մեծագույն կրթադաստիարակչական նշանակություն: Գուցեև հենց այդ պատճառով էլ այս թեման «Հայոց պատմության» նոր դասագրքում, ըստ էության, փաստազերծ է արվել ու ամբողջապես աղճատվել:

Լրացուցիչ տեղեկություններ և դիդակտիկ նյութեր

449-451 թթ. հայ-պարսկական պատերազմի մի քանի կարևոր դրվագները հարկ է լրացնել որոշ մանրամասներով:

Սասանյան հեծյալ կորպուսի ոչնչացումը (449 թ. նոյեմբեր-դեկտեմբեր)

Ապստամբության առաջին գործողությունը եղավ այն, որ Վարդան Մամիկոնյանի ծրագրած ու գլխավորած գիշերային փայլուն ռազմագործողությամբ իր իսկ դաշտային ճամբարում ջախջախվեց սասանյան հեծյալ այն կորպուսը, որն ուղարկվել էր Հայաստան՝ բնակչությանը բռնի ուժով հավատափոխելու նպատակով: Այդ զորամիավորման ամբողջ զենքը, զինամթերքն ու հանդերձանքն առգրավվեց հօգուտ հայոց բանակի, իսկ ողջ մնացած հրամանատարները գերվեցին:

Կա՛մ դասագրքում, կա՛մ դասագրքի օգտագործման մեթոդական ուղեցույցում պետք է ավելացնել հետևյալ տեղեկատվությունը՝ գուցե փոքր-ինչ կրճատված վիճակում: Հարձակումը պարսկական ճամբարի վրա իրականացվել էր այդ ժամանակվա ռազմական տեսության (բյուզանդական տրակտատներից մեզ հայտնի) բոլոր կանոնների համաձայն: Հայոց բանակը լուսածագին երեք կողմից շրջապատել է պարսից ճամբարը, չփակելով, սակայն, չորրորդ՝ հարավային կողմը, որպեսզի պարսիկներն ունենան նահանջի ճանապարհ ու դիմեն փախուստի՝ առանց կատաղի դիմադրություն ցույց տալու: Այդ ժամանակներում, ինչպես և այժմ, գիշերային կամ նախալուսաբացային հարձակումը համարվում էր չափազանց բարդ ռազմագործողություն: Հայոց զորքերի ձեռքբերած կատարյալ հաղթանակը վկայում է, որ այդ ռազմագործողությունը նախապատրաստվել էր ամենայն մանրակրկիտությամբ, Վարդան Մամիկոնյանն ու նրա շտաբը զորքերը ճիշտ էին տեղաբաշխել և մարտը հմտորեն էին ղեկավարել՝ ապահովելով անհրաժեշտ գաղտնապահություն մինչև հարձակման պահը:

16 ամրոցների ազատագրումը (449 թ. նոյեմբեր-դեկտեմբեր)

Նշված գիշերային ռազմագործողությունից անմիջապես հետո՝ 2-3 օրվա ընթացքում, Վարդան Մամիկոնյանն ու նրա զինակիցները հատ-հատ ոչնչացրեցին Մարզպանական Հայաստանի 16 առանցքային ամրոցներում (ներառյալ մարյաքաղաք Արտաշատում) տեղակայված սասանյան կայազորները՝ գրեթե միաժամանակ իրականացնելով 16 կայծակնային հատուկ ռազմագործողություն:

Կա՛մ դասագրքում, կա՛մ դասագրքի օգտագործման մեթոդական ուղեցույցում պետք է ավելացնել ազատագրված ամրոցների անունները. «Մեծն Արտաշատը», «Գառնի քաղաքը», Անին, Արտագերսը, Երկայնորդքը, Արխնին, Բարձրաբողը, Խորանիստը, Ծախանիստը, Ողականը, Արփանյալը, Վանը, Գռյալը, Կապոյտը, Որոտնը ու Վաշակաշատը»:

Խոր մարտարշավ Արցախից Փայտակարան (449 թ. նոյեմբեր-դեկտեմբեր)

Ապստամբության սկզբնական այդ փուլում տեղի ունեցավ ևս մեկ ուշագրավ իրադարձություն: Արցախում տեղակայված հայոց այրուձին խոր մարտարշավ (ռեյդ) կատարեց Փայտակարանի միջով դեպի Ատրպատական՝ կանխարգելիչ հարված հասցնելով սասանյան զորքերին և երկար ժամանակով ապահովելով հայ-պարսկական սահմանի այդ ամենավտանգավոր հատվածի անձեռնմխելիությունը:

Կա՛մ դասագրքում, կա՛մ դասագրքի օգտագործման մեթոդական ուղեցույցում պետք է ավելացնել, որ այս համարձակ զորաշարժն իրականացրած հայկական այրուձիի մեծ մասը բաղկացած էր ոստանիկական զորքերից, այսինքն՝ նախկին թագավորական քառասուն հազարանոց բանակի՝ մասամբ արցախյան Տիգրանակերտում տեղաբաշխված հեծյալ կազմավորումներից, որոնք գտնվում էին հայոց սպարապետի անմիջական ենթակայության տակ: Ընդ որում, այդ ընտիր զորագնդի հրամանատարությունը Ատրպատականին կանխավ հարվածելու որոշումն ընդունել էր սեփական նախաձեռնությամբ, չսպասելով Հայոց սպարապետի հրամանին: Իսկ հրամանը նրանց չէր տրվել, ըստ երևույթին, անվտանգության նկատառումներից ելնելով՝ ժամանակից շուտ ապստամբության նախապատրաստումը չբացահայտելու մտավախությամբ: Ատրպատականի ուղղությամբ կանխարգելիչ հարվածներն իրականացվում էին դեռևս 3-4-րդ դարերում տեղի ունեցած հայ-պարսկական բազմաթիվ պատերազմների ժամանակ:

Համընդհանուր զորահավաք (450 թ. առաջին ամիսները)

Այս երեք ռազմագործողություններից հետո Հայկական բանակը վերահսկողություն հաստատեց Մարզպանական Հայաստանի ողջ տարածքի վրա: Անհապաղ կազմակերպվեց համընդհանուր զորահավաք: Հայկական բանակի թվակազմը հասցվեց շուրջ 90 հազար մարտիկների՝ ընդհուպ մոտենալով Մեծ Հայքի նախկին թագավորության միացյալ բանակի 100-120-հազարանոց ավանդական թվաքանակին: Ինչպես վերը նշվեց, այդ միացյալ բանակը բաժանվել է երեք մասի՝ ստանալով 1-ին, 2-րդ և 3-րդ զորաբանակ անվանումները:

Խաղխաղի ճակատամարտը (451 թ. գարուն)

450 թ. գարնանը տեղի է ունեցել Խաղխաղի ճակատամարտը (ներկայիս Ղազախ քաղաքի մոտակայքում՝), որի մասին նոր դասագիրքը քար լռություն է պահպանում: Դա նույնն է, եթե ԽՍՀՄ-ի կամ Ռուսաստանի դպրոցական դասագրքերում Հայրենական Մեծ պատերազմը ներկայացնող գլուխներում Ստալինգրադի կամ Կուրսկի ճակատամար-

տերն առհասարակ չհիշատակվեն, ինչը սկզբունքորեն անհնար է, որովհետև աշակերտներն այդ դեպքում ճիշտ պատկերացում չեն կազմի պատերազմի ընթացքի մասին: Իսկ Վարդանանց պատերազմը հայ ժողովրդի մեծ հայրենական պատերազմներից մեկն էր:

Խաղխաղի ճակատամարտում սպարապետ Վարդան Մամիկոնյանը, կիրառելով բարդ և անսովոր մարտավարական հնարք (ճակատի երկայնքով անհավասար է բաշխում զորքը՝ հիմնական ուժերը կենտրոնացնելով հարձակման ընտրված ուղղության վրա), իր գլխավորած հեծելազորային բանակի հետ միասին մեծ հաղթանակ է տոնել: Խաղխաղի և Ավարայրի ճակատամարտերը աշակերտներին անհրաժեշտ է մատուցել ոչ միայն տեքստային շարադրանքով, այլև օժանդակ քարտեզներով, որոնք, ի դեպ, հրապարակված են Վարդանանց պատերազմի քննությանը նվիրված իմ մենագրության մեջ: Ստորև բերված փաստերը պետք է մասամբ շարադրվեն դասագրքում, մասամբ՝ դասագրքի օգտագործման մեթոդական ուղեցույցում (այդ բաժանումն այստեղ կատարելը նպատակահարմար չէ):

Եվ այսպես, 450 թ. սկզբին Աղվանքում պարսիկները կուտակում էին խոշոր ուժեր՝ արևելքից Հայաստան ներխուժելու նպատակով: Այնտեղ արդեն իսկ հավաքվել էր մեծ (մոտ 40-հազարանոց) բանակ՝ Սեբուխտ Նիխորականի գլխավորությամբ: Հայոց հրամանատարությունը որոշում է կանխարգելիչ հարված հասցնել պարսիկներին, ազատագրել Աղվանքը, ընդլայնել Հայոց բանակի վերահսկողության տակ գտնվող գոտին, ստեղծել տարածաշրջանային կոալիցիա ընդդեմ պարսիկների՝ միացնելով իրեն աղվանական ու վրացական առկա ուժերը: Ավելին, նպատակ էր դրվել գրավել ներկայիս Դերբենդ քաղաքի շրջակայքում գտնվող «Ճորա պահակ» կոչվող սահմանապահ մեծ ամրոցը, այնտեղից անմիջական կապ հաստատել ու հակասասանյան դաշինք կնքել հզոր «հոների» հետ: Աղվանքի ազատագրության գործը պետք է կատարեին նորաստեղծ երեք հայկական բանակներից երկուսը՝ Վարդան Մամիկոնյանի 2-րդ զորաբանակը՝ հյուսիս-արևմուտքից, և Վասակ Սյունու 3-րդ զորաբանակը՝ հարավ-արևմուտքից (1-ին հայկական զորաբանակը, Ներշապուհ Արծրունու գլխավորությամբ, ուղարկվել էր հարավ-արևելյան ուղղությամբ՝ հսկելու հայ-պարսկական սահմանի ամենավտանգավոր հատվածը՝ Ատրպատականի կողմից): Վասակ Սյունին չի կատարում այդ ծրագրով մշակված ու համաձայնեցված իրեն վերապահված ռազմական առաջադրանքը, փոխարենը մատնում է պարսիկներին Վարդան Մամիկոնյանի գլխավորած շուրջ 20,000-անոց հեծյալ բանակի դեպի Աղվանք սրընթաց արշավելու երթուղին և ժամանակացույցը: Ստանալով Վասակ Սյունուց այդ գաղտնի տեղեկությունները՝ Սեբուխտը հասցնում է իր մոտ 40,000-անոց բանակով կտրել հայոց 2-րդ զորաբանակի ճանապարհը՝ Խաղխաղ քաղաքի մոտ գտնվող դաշտում դասավորելով իր զորքերը: Անսպասելիորեն հայտնվելով թվապես մոտ երկու անգամ ավելի մեծ պարսկական զորքի մարտական կուռ մարտակարգերի առջև, հայոց հեծելազորն առաջին պահին հանկարծակիի է գալիս: Սակայն Վարդան Մամիկոնյանը, ակնթարթորեն կողմնորոշվելով, ընդունում է ստեղծված ծանր իրավիճակում հնարավոր լավագույն որոշումը: Նա կիսում է իր բանակը երկու մասի՝ ձախ թևում կենտրոնացնելով իր զորքի երեք չորրորդ մասը՝ մոտ 15 հազար հեծյալ և այդպիսով ստեղծելով թվային գերակշռություն մեկ և միակ ուղղությամբ՝ պարսից աջ թևի նկատմամբ, որը բաղկացած էր, հավանաբար, շուրջ 10 հազար ռազմիկներից: Սա ճակատամարտի ամենաուշագրավ, կանխորոշիչ պահն է: Հակառակորդի մարտակարգերի անմիջական մերձակայքում արագ անցկացված այդպիսի բարդ վերադասավորումն ի զորու էին իրակա-

նացնել միայն միմյանց հետ լավ համագործակցող ընտիր զորագնդերը, որոնցից և բաղկացած էր 2-րդ հայկական զորաբանակը: Այդ 15,000-անոց հարվածային բռունցքով Վարդան սպարապետն այնուհետև, փաստորեն, ընթացքից հարձակվում է պարսից աջ թևի վրա, ջախջախում և շպրտում այն պարսից ձախ թևի վրա՝ արդյունքում կազմալուծելով թշնամու մարտակարգերը ճակատի ողջ երկայնքով: Պարսից զորքերը մատնվում են կատարյալ շփոթության: Խափանվում է նաև նրանց կառավարումը, քանի որ Վարդանի զորագնդերը հայտնվում են պարսից գլխավոր ուժերի և փոքր-ինչ թիկունքում (պահեստային զորագնդի հետ միասին) գտնվող Սեբուխտ զորավարի միջև: Հաղթական վերջակետն այս ճակատամարտում դնում է Արշավիր Կամսարականի 5,000-անոց զորախումբը, որը Վարդան Մամիկոնյանը թողել էր ճակատի կենտրոնական հատվածում որպես և՛ կաշկանդիչ ուժ, և՛ պահեստազոր: Արշավիրը ճիշտ ժամանակին հուժկու հարված է հասցնում շփոթության մատնված պարսից կենտրոնին ու միանում Վարդանի զորամիավորմանը: Արդյունքում՝ սասանյան զորքերի զգալի մասը շրջապատվում է Լոպնաս (Աղստև) գետի ափին ու ենթարկվում ջարդի:

Խաղխաղի ճակատամարտից հետո Վարդան Մամիկոնյանի հաղթական 2-րդ զորաբանակը մարտերով ազատագրում է ամբողջ Աղվանքը, ապա ներկայիս Բաքվի միջով անցնող ճանապարհով հասնում Ճորա պահակին, գրավում այդ ամրոցն ու, բանակցություններից հետո, հոների հետ փոխօգնության պայմանագիր կնքում: Դասագրքում Վարդան Մամիկոնյանի ձեռք բերած այս կարևոր ռազմական և դիվանագիտական նվաճումների մասին բացարձակ որևէ տեղեկություն չի տրվում: Քար լռություն է պահպանված ինչպես հոների հետ կնքված այդ հույժ կարևոր դաշինքի, այնպես էլ դրա արդյունքում նրանց Սասանյան տարածք ներխուժելու մասին (Ավարայրի ճակատամարտից հետո՝ 451 թ. երկրորդ կեսին):

Անհրաժեշտ է զետեղել Խաղխաղի ճակատամարտի քարտեզը (կցված է):

Վարդան Մամիկոնյանի կերպարը

Դասագիրքն ըստ արժանվույն չի գնահատում սպարապետ Վարդան Մամիկոնյանին: Այնինչ «Հայոց պատմության» ապագա դասագրքերում պարտադիր պետք է նշվի, որ Վարդան Մամիկոնյանն իր ժամանակի լավագույն զորավարներից էր: Նրա զորավարական տաղանդի համբավը թևածում էր և՛ Հայաստանում, և՛ Հայաստանից դուրս՝ Սասանյան ու բյուզանդական արքունիքներում, ինչպես նաև հոնական զորքերում: Առհասարակ, մեծ զորավարները նույնչափ հազվադեպ են ծնվում, որչափ մեծ գիտնականները կամ մեծ երգահանները: Մեր միջնադարյան անվանի մատենագիրները՝ Մեսրոպ Վայոցձորեցին ու Վարդան Արևելցին հաղորդում են ռազմի դաշտում սպարապետ Վարդանի տարած հաղթանակների ընդհանուր թիվը՝ 42 հաղթանակ: Պատկերացնելու համար, թե սա ինչպիսի տպավորիչ արդյունք է, կարելի է հիշել, որ համաշխարհային ռազմական պատմության ամենամեծ հանճարներից մեկը՝ Նապոլեոն Բոնապարտը տվել է, ընդհանուր առմամբ, 60 ճակատամարտ՝ 49-ում հաղթելով, 8-ում պարտվելով, 3-ը՝ ոչ-ոքի ավարտելով: Եթե հաշվենք միայն 449-451 թթ. Հայոց սպարապետի ընդհանուր ղեկավարությամբ իրականացված ռազմագործողությունների քանակը, ներառյալ վերոհիշյալ 16 ամրոցների գրավումը, ապա կունենանք մոտ 25-30 հաղթանակ: Մնացած մեկուկես տասնյակ հաղթանակները նա ձեռք է բերել ավելի վաղ, հիմնականում՝ 441-449 թթ. Սասանյանների տերության արևելյան սահմաններում քուշանների դեմ մղված երկարատև

պատերազմում, որին պարսկական բանակի կազմում մասնակցում էր նաև հայոց այրուձին՝ Վարդան սպարապետի գլխավորությամբ: Ամենայն հավանականությամբ, Իրանի հյուսիս-արևելքում մղված մի քանի խոշոր ճակատամարտերում պարսկական ընդհանուր բանակը գլխավորել է հե՛նց Վարդան Մամիկոնյանը:

Նսեմասցնելու համար Վարդան Մամիկոնյանին և բարձրացնելու համար Վասակ Սյունու կերպարը դասագրքում կատարված է մի ընդարձակ մեջբերում Ղազար Փարպեցու «Հայոց պատմությունից», ըստ որի՝ Վարդան Մամիկոնյանն իբր ցանկանում էր իր ամբողջ ցեղով հեռանալ Բյուզանդական կայսրություն, իսկ Վասակ Սյունին նրան այդ մտքից հետ է պահել (էջ 131): Այս հաղորդումը կտրականապես հակասում է 449-451 թթ. պատերազմի ականատես և անմիջական մասնակից Եղիշեի հաղորդումներին և զուրկ է արժանահավատությունից, ինչպես նաև Եղիշեից կես դար անց իր երկը հեղինակած Ղազար Փարպեցու բազմաթիվ ուրիշ հաղորդումներն այդ դեպքերի մասին: Եղիշեի անունն առհասարակ չի տրվում այդ թեմայում: Այնինչ խնդրո առարկա պատերազմի մասին գլխավոր և անփոխարինելի սկզբնաղբյուրը հե՛նց Եղիշեի գլուխգործոցն է՝ «Վարդանի և Հայոց պատերազմի մասին» բացառիկ հավաստի երկը, որի բազմաթիվ կարևոր հաղորդումներից ու թևավոր խոսքեր դարձած դիպուկ գնահատականներից գեթ մեկը 2023 թ. հրատարակված նոր դասագրքում չի մեջբերվել: Կարելի է մեջբերել այդպիսի ասույթներ կամ նույնիսկ ամբողջական հատվածներ հայոց զորքի առջև Վարդան Մամիկոնյանի և Ղևոնդ երեցի արտասանած ճառերից:

Ավարայրն իբրև մարտավարական ոչ-ոքի

Ոչ-ոքիներով են ավարտվել շատ ուրիշ մեծ և փոքր ճակատամարտեր, օրինակ՝ ռուսների և ֆրանսիացիների միջև 1812 թ. տեղի ունեցած Բորոդինոյի ճակատամարտը, որը նույնպես կարճ ժամանակ անց ռուսների համար վերածվեց ռազմավարական հաղթանակի: Ընդ որում, ճակատամարտից անմիջապես հետո ռուսական հրամանատարության մեջ ոմանք Բորոդինոն պարտություն էին համարում՝ հիմք ընդունելով այն փաստը, որ ռուսական բանակը նահանջեց ու Նապոլեոնին հանձնեց մայրաքաղաք Մոսկվան: Մինչդեռ գլխավոր հրամանատար Միխայիլ Կուտուզովն ամենասկզբից էլ համոզված հայտարարում էր, որ Բորոդինոն հաղթանակ է, քանի որ ռուսական բանակը ոչ միայն չէր ջախջախվել, այլև ֆրանսիացիներին մեծ կորուստներ պատճառելուց հետո կանոնավոր կերպով նահանջել էր ու անցել դիմադրության հաջորդ փուլին:

Եղիշեն Ավարայրի ճակատամարտին տվել է ճշգրիտ գնահատական. *«Ոչ թե մեկ կողմը հաղթեց, և մյուս կողմը պարտվեց, այլ քաջերը քաջերի դեմ դուրս գալով՝ երկու կողմերն էլ պարտություն կրեցին»*: Եղիշեի այս ամփոփումը նմանվում է Նապոլեոնի՝ Բորոդինոյի ճակատամարտին հետագայում տված գնահատականին. «*Իմ բոլոր ճակատամարտերից ամենաահավորն այն էր, որ ես տվել եմ Մոսկվայի մատույցներում: Ֆրանսիացիներն իրենց արժանի ցույց տվեցին՝ հաղթանակ տանելու, իսկ ռուսները նվաճեցին անպարտելի լինելու իրավունքը*»: Եղիշեի և Նապոլեոնի այս հատու բանաձևումներում համարժեքորեն արտացոլված են այդ բախտորոշ ճակատամարտերի ռազմաքաղաքական ընդհանուր արդյունքները:

Եկեղեցու դերը

449-451 թվականներին Հայաստանում ընթացող զորահավաքային միջոցառումների և պատերազմական գործողությունների կապակցությամբ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել Հայոց եկեղեցու՝ հայրենիքի համար զոհված զինվորներին սրբադասելու պատմական ավանդույթին: Այս ավանդույթը սկիզբ է առել ոչ թե 451 թ., ինչպես շատերը սխալմամբ կարծում են, այլ մեկ դար առաջ՝ 338 թ.: Այդ ժամանակ տեղի էր ունեցել Սասանյան տերության հետ մեկ այլ խոշոր բախում, որի ընթացքում երկու կողմերն էլ մեծ կորուստներ էին կրել (այդ թվում՝ զոհվել էր սպարապետ Վաչե Մամիկոնյանը): Դրանից հետո Հայոց կաթողիկոս Վրթանես Ա-ն (Գրիգոր Լուսավորչի ավագ որդին) հատուկ կոնդակ է արձակում, համաձայն որի՝ եկեղեցին տարվա մեջ սահմանել է հատուկ օր՝ նվիրված Հայաստանի համար զոհված զինվորների հիշատակին: Ընդ որում, հաստատված եկեղեցական կանոնը վերաբերում էր ոչ միայն 338-ին զոհվածներին, այլև բոլոր նրանց, ովքեր ապագայում կզոհվեն հանուն Հայոց «երկրի» ու «աշխարհի» (այսինքն՝ «հայրենիքի»): Իր ժամանակի համար եզակի այդ եկեղեցական-պետական ավանդույթը, որը համատեղում է Հայաստանի քաղաքական անկախության համար մղվող պայքարը իր կրոնական ընտրության և ազգային ապրելակերպի ազատության համար պայքարի հետ, 451 թվականին գործել է արդեն իր ողջ կուտակված դարավոր գաղափարական ուժով:

Հարկ է ավելացնել, որ զինվորական համազգեստով հոգևորականները 449-451 թթ. կռիվների ժամանակ իրենց զուտ ներկայությամբ արդեն բարձրացրել են հայոց բանակի մարտական ոգին, իրենց ելույթներով սխրանքների են ոգեկոչել Վարդան Մամիկոնյանի զինվորներին՝ մարտի դաշտում մահը հավասարեցնելով սուրբ նահատակության և հաղորդելով 449-451 թթ. հայոց ազատամարտին չափազանց ուժգին՝ կրոնահայրենասիրական բնույթ: Այդպիսի վառ օրինակ է Ղևոնդ քահանայի ելույթը հայոց բանակի առջև:

Կից ներկայացվում են քարտեզներ՝ «449-451 թթ. պատերազմը», «Խաղխաղի ճակատամարտը» և «Ավարայրի ճակատամարտը»:

Ներկա ուղեցույցի պատմագիտական հիմքը

Վերը բերված փաստերն ու եզրակացությունները հիմնված են հետևյալ հիմնարար պատմառազմագիտական հետազոտության վրա՝ **Айвазян Армен**. Армяно-персидская война 449–451 гг. Кампании и сражения. (Ер.: Воскан Ереванци, 2016. – 516 с.+илл. ISBN 978-99930-0-243-7): Նույն գիրքը, մանր սրբագրություններով հանդերձ, վերահրատարակվել է Ս. Պետերբուրգում (СПб.: Алетейя, 2017. ISBN 978-5-906860-73-6): Գիրքը կարելի է ներբեռնել այստեղից՝ https://hayrazmik.com/449-451-the-armenian-persian-war/

Մենագրությունը 449-451 թթ. պատերազմի ռազմական պատմության առաջին ամբողջական ու բազմակողմանի քննությունն է: Աշխատությունում, մասնավորապես՝ բացահայտվել ու ճշտվել են մարտական գործողությունների շարժընթացն ու ժամանակագրությունը, հայկական ու պարսկական բանակների թվաքանակը, նրանց կազմակերպական կառուցվածքներն ու ռազմական հայեցակարգերը, պատերազմի ու մարտի վարման գործնական պահանջներն ու եղանակները: Մանրամասնորեն վերլուծության են ենթարկվել Խաղխաղի (450 թ.) և Ավարայրի (451 թ.) ճակատամարտերը, ներառյալ՝ բուն ընթացքը, հակառակորդների մարտավարական պատրաստությունները, մարտակարգերը, զորատեսակների քանակն ու առաջադրանքները, դրանց ռազմաճակատում ու խորքում տեղաբաշխումը: Սահմանվել է այդ պատերազմի պարբերացումը: Վերծանվել

ու մեկնաբանվել են զրաբարի ռազմական բառապաշարի և եզրութաբանության բազմաթիվ միավորների նշանակությունները: Պատմառազմագիտական տեսության և աղբյուրագիտական հարուստ նյութի մանրազնին համադրման ծիրում քննության են ենթարկվել հին Հայաստանի ռազմական պատմության մի շարք զուգահեռ հիմնախնդիրներ, այդ թվում՝ հայոց բանակի բարեփոխումները, ինչպես նաև առանձին զորամիավորումների ծագման, հրամանատարության ու հետագա պատմության հետ կապված հարցերը (Մարդպետական զորք, ոստանիկներ, սպասավորներ, սահմանապահներ, կատաֆրակտներ): Բոլոր հարցերը հետազոտվել են միջգիտակարգային մեթոդաբանությամբ՝ աղբյուրագիտական, ռազմապատմական, ռազմատեսական, ռազմաեզրութաբանական, ստուգաբանական, պատմաբանասիրական, պատմաժողովրդագրական, տեղագրական ու ժամանակագրական վերլուծության տարբեր մակարդակների ինտեգրման հիման վրա:

Մենագրությունն արդեն իսկ գնահատվել է որպես «հիմնարար», մասնավորապես, հետևյալ գրախոսություններում՝

1) **Мушегян А. В.** Рецензия на книгу: Айвазян А. Армяно-персидская война 449–451 гг.: Кампании и сражения. Ереван: Воскан Ереванци, 2016. 516 с. – «Parabellum novum», №6 (39). СПб., 2017. С. 153-156.
2) **Мушегян А. В.** Рецензия: АРМЕН АЙВАЗЯН. Армяно-персидская война 449–451 гг. Кампании и сражения. Ереван. Дом печати «Воскан Ереванци», 2016, 516 с.+илл. – «Պատմա-բանասիրական հանդես», 2017, № 1, с. 191-199 (սա 1-ին գրախոսության ընդարձակ տարբերակն է).
3) **Дмитриев В. А.** Рецензия на: Айвазян А. Армяно-персидская война 449–451 гг.: Кампании и сражения. Ереван: Воскан Ереванци, 2016. 516 с. – «Метаморфозы истории». 2016. Вып. 8. С. 231-242.



Գծագիր 1.
Խաղխաղի ճակատամարտը (450 թ. գարուն). ելման դիրքերն ու սկզբնավորումը



Գծագիր 2.
Խաղխաղի ճակատամարտը (450 թ. գարուն). պարսից բանակի ջախջախումը


Գծագիր 3. Ավարայրի ճակատամարտը (451 թ. մայիսի 26).
ելման դիրքերն ու սկզբնավորումը
Հայոց այրուձի
Հայոց հետևակ
Պարսից հեծելազոր
Պարսից հետևակ
Ապարհացիների ջոկատ
Պարսկական մարտական փիղ
Փղազորի պահեստային գունդ
Պարսից ճամբար
Հայոց ճամբար
Հողային ամրություններ
Թաթուլ Վանանդեցի
Վարդան Մամիկոնյան
Ներշապուհ Արծրունի
Խորեն Խորխորունի
Տղմուտ գ. (Ակչայ)
Մուշկան Նիսալավուրտ
Վասակ Սյունի
Արտաշիր
① Հայերը գրոհում են ամբողջ ճակատով:
② Պարսիկների աջ թևը հակագրոհում և ետ է մղում հայերի ձախ թևը:
③ Հայոց պահեստազորն աջակցում է իր ձախ թևին, ետ շպրտում պարսից աջ թևի առաջին գիծը և գրոհում երկրորդ գծի վրա:
© Արմեն Այվազյան. Քարտեզը հրատարակվել է հետևյալ գրքում՝
Армен Айвазян. Армяно-персидская война 449-451 гг.: кампании и сражения (2016)
Քարտեզագիր՝ Ռուբեն Թարումյան


Գծագիր 4. Ավարայրի ճակատամարտը (451 թ. մայիսի 26).
վճռական մարտերն ու Հայոց բանակի նահանջը
Հայոց այրուձի
Հայոց հետևակ
Պարսից հեծելազոր
Պարսից հետևակ
Ապարհացիների ջոկատ
Պարսկական մարտական փիղ
Փղազորի պահեստային գունդ
Պարսից ճամբար
Հայոց ճամբար
Հողային ամրություններ
† Վարդան Մամիկոնյանի զոհվելու վայրը
Թաթուլ Վանանդեցի
Ներշապուհ Արծրունի
Տղմուտ գ. (Ակչայ)
Վարդան Մամիկոնյան
Մուշկան Նիսալավուրտ
Արտաշիր
Վասակ Սյունի
① Պարսից կենտրոնը նահանջում է և պաշտպանողական դիրքեր գրավում հայոց ձախ թևի դեմ:
② Հայոց զորքերը նահանջում են:
③ Վարդան Մամիկոնյանի ջոկատը վերջապահական մարտ է մղում:
④ Վահան Արծրունու զրահապատ հեծյալների ջոկատը ճեղքում-հասնում է Վարդան Մամիկոնյանին:
⑤ Պարսկական պահեստազորը գրոհում է և շրջապատում Վարդան Մամիկոնյանին:
© Արմեն Այվազյան. Քարտեզը հրատարակվել է հետևյալ գրքում՝
Армен Айвазян. Армяно-персидская война 449-451 гг.: кампании и сражения (2016)
Քարտեզագիր՝ Ռուբեն Թարումյան